Կարծիք Արսեն Բոբոխյանի «Վիշապ» քարակոթղները և դրանց հնագիտական համատեքստը» ատենախոսության վերաբերյալ:

Վիշապ կոթողների հանդեպ գիտական հետաքրքրությունը, չնայած ավելի քան հարյուրամյա պատմությանը, շարունակում է արդիական մնալ: Պատճառը, կարծում եմ, այդ կոթողների համեմատական մեկուսի կամ առանձնակի տեղադրությունն է բարձր լեռնային միջավայրում, շրջակա մշակութային համալիրների հետ թույլ կապվածությունը կամ կապվածության բացակայությունը, նրանց ծավալային, քանդակային և հատկապես հորինվածքային լուծումները: Մինչև հինգ և ավելի մետրի հասնող սլացիկ ծավալ, ամուր բազալտի կատարյալ մշակման տեխնիկա, ընդգծված ելնդավոր քանդակ, կենդանիների և թռչունների ռեալիստական պատկերում, և ի վերջո ամենատիպականը՝ հսկայական ծավալա-քանդակային ձկան և ցլաքանդակի անսովոր մի համադրություն, որի խորհրդի բացահայտումն ինչքան հրապուրիչ, այնքան էլ բարդ է թվում:

Այս խնդիրները թեև դարձել են հետազոտողների մի քանի սերունդների քննության առարկա, բայց հրապույրը տարբեր հետազոտողների համար կարծեք մնում է նույնը: Եվ վերջին մոտ տասնհինգ տարվա ուսումնասիրությունները կարծեք հետազոտողների նոր սերնդի տուրքն է այդ զարմանալի պատմամշակութային ֆենոմենին: Այս տեսակետից կարելի է կարծել, որ Արսեն Բոբոխյանի հետազոտությունները և դրանց արդյունքներով ստեղծված դոկտորական ատենախոսությունը գիտական նման հետաքրքրության ամենաբնորոշ, բայց և կուզեի շեշտել, առանձնահատուկ դրևորումն է: Իսկ առանձնահատկությունը հենց նրանում է, որ ատենախոսը միտումնավոր մի կողմ է թողնում վիշապ կոթողների ծավալա-քանդակային հորինվածքների խորհրդաբանական, իմաստաբանական ու ծիսական քննությունը (ինչը եղել է այս կոթողներին անդրադառնալու նախորդ համարյա բոլոր հետազոտողների հիմնական մոտիվացիան) և ձգտում նախ և առաջ փորձարկել կոթողների հետ կապված սահմանումներ, դրսևորումներ և մեթոդներ, որոնք ավելի կարևորում և փորձում են ներկայացնել, հասկանալ ու մեկնաբանել դրանց անմիջական տեղադրությունը, միջավայրը, փոխակապվածությունը երկաբանական-բնական-հնագիտական համատեքստերի հետ:

Աշխատանքի ներածությունը (էջ 4-5, սեղմագիր, էջ 3-5) բավարար չափով քննարկում-ներկայացնում է հետազոտության արդիականությունը, խնդիրները, մեթոդաբանությունը, ուր կենտրոնական խնդիր է դառնում հենց միջավայրային մատեցման շեշտադրումն ու մանրամասնումը:

Աշխատանքի առաջին գլուխը, որ անվանված է «Սահմանումներ», ավելի եզրաբանական քննություն է՝ առաջարկներ և պայմանավորվածություններ, թե ինչպես սահմանել, կոչել և ներկայացնել վիշապ քարակոթողի բազմաչափ տեխնիկական բնութագիրը: Ուշագրավ քննություն է, հիմքում բուն վիշապ կոթողի բազմազանությունն է, ինչն առաջարկվում է տարբերակել-զանազանել-տիպաբանել մշակվածություն-ձև/կտրվածք-նյութ-պատկեր/արձանագրություն-լանդշաֆտ հատկանիշներով (էջ 13): Փոքր ինչ տարակուսելի է վիաշապ կոթողների երեք տիպերից առաջինի «ցլակերպ» անվանումը (էջ 17), եթե նկատի ունենանք, որ ցլակերպ ծավալով կոթողներ չկան: Օրինակ, երկրորդ տիպը՝ ձկնակերպ, լրիվ ընդունելի է. ձկնակերպ կոթողներ, որոնք ձկնապերպությունը ծավալային-քանդակային է, նույն տարակուսանքն ունեմ երրորդ տիպի՝ ձկնացլակերպ անվանման հետ կապված: Կարծում եմ, որ տիպաբանության հիմքում պիտի դնել հավասարարժեք հատկանիշներ՝ և տարբերակելով իրարից ծավալն ու քանդակը: Բոլոր դեպքերում այս գլխի քնությունն իր հարցադրումներով իրոք էական է և կարծում եմ հեղինակը դեռ հնարավորություն կունենա դրանք սրբագրելու: Ընդ որում, նկատենք, որ Հավելված 1 շտեմարանում, որ ուղղակի հիացնում է իր կուռ կառուցվածքով, ներկայացման ճշգրտությամբ և մանրմասներով, կան եզրաբանության հետագա էլ ավելի հստակեցման բոլոր տվյալները: Այստեղ էլ նկատենք, գոնե ինձ համար, մի քան եզրերի կիրառությունը կարելի է վերանայել՝ օրինակ՝ ռելյեֆի փոխարեն ելնդավոր, ֆոնի փոխարեն՝ ետնախորք, տարօրինակ են զգետնել, սին և նման մի քանի այլ եզրեր:

Ես հպանցիկ կանդրադառնամ երկրորդ գլխին, որը ներառում է ուսումնասիրության պատմությունը: Այստեղ ցանկանում եմ շեշտել մի կարևոր հանգամանք, որ ընդհանրապես բնորոշ է Արսեն Բոբոխյան հետազոտողին: Դա հարգալից և հանգամանալից վերաբերմունքն է դեպի նախորդ հետազոտողները, նրանցից յուրաքանչյուրի նույնիսկ հպանցիկ դիտողությունը, բանավոր հաղորդումը նկատելն ու գնահատելը: Ակադեմիական բարեվարքության նման դրսևորում միշտ չէ, որ հանդիպում ենք մեր գիտական հետազոտություններում:

Սխալված չենք լինի, եթե նկատենք, որ ատենախոսության ամենանորությային և տեսա-գործնական բաժինը դա երրորդ գլուխն է, որ վերնագրված է «Նորագույն հետազոտությունները» և որն ակնհայտորեն հեղինակի բազմապրոֆիլ մոտեցումների և համապատասխան դաշտային ու լաբորատոր նախաձեռնությունների մանրամասն ներկայացումն ու քննությունն է: Գիտական ընդարձակ և բարդ հիմնախնդրի լուծման համար կատարվել է հիմնարար ընտրություն՝ բազմակողմանի հետազոտություններ Տիրինկատարում և հենց այդ հետազոտությունների լույսի ներքո վիշապ կոթողների թվագրության հստակեցում (Ք. ա. 22-13-րդ դարեր, էջ 181 և հջրդ), դրանց ավելի վաղ՝ պղնձեքարեդարյան ակունքների պարզաբանում: Տիրինկատարի հետազոտությամբ կոթողների կուտակումները բնորոշվում են որպես սրբավայր (էջ 181-183): Թե կոնկրետ ինչ գործառույթ են ունեցել այդ կոթողները, որքան հասկանում եմ հնագիտական կոնտեքստը չի պարզաբանում կամ չի պարզաբանում մինչև վերջ: Դրությունը չի փոխում և ատենախոսի այն պարզաբանումը, թե նոր հետազոտությունները ցույց են տալիս, որ գործ ունենք ավել բարդ երևույթը հետ: Դժվար ընկալելի է և հեղինակի այն ընդհանրական դիտողությունը, թե դրանք արտացոլում են ծնունդ, վերարտադրություն, կենսական ցիկլ և այլն (էջ 98): Ես այն կարծիքին եմ, որ եթե թույլ տրվի օգտագործել միջնադարյան եզրը, ես այդ քանդակակիր կոթողները կանվանեի «պատարագամատույց», այսինքն դրանք իրենց պատկերագրությամբ ցուցում են, թե ինչպես պիտի ընթանա ծեսը:

Հնագիտական գործիքակազմը, ինչպես դա կոչում է հեղինակը, առատորեն գործարկում է քանդակների ծավայաին, ձևաբանական և քանդակային մանրամասն տեխնիկական բնութագրերն ու բաժանումները: Սրանք իրոք հնարավորություն են ատլիս նաև քննել տարբեր գոտիներորում դրանց հանդիպման հաճախականությունն ու օրինաչափությունը, ինչն իր հերթին հնարավոր է դարձնում խոսել դրանց ժամանակագրական զարգացման փուլայնության մասին (ձևավորում, ծաղկում, մարգինալացում և այլն, էջ 96, 215 ևն): Սա ես համարում եմ հենց նման մոտեցմամ լուրջ ձեռքբերում: Այստեղ էլ նկատեմ, որ տարակուսելի է վիշապաքանդակների՝ որպես զուսպ և մինիմալիստական ոճ ձևակերպումը (էջ 94, 97 ևն), կարծում եմ նման մոտեցումն ստվերում է այս հորիվածքների ընդհանրական պաշտամունքային-առասպելական-ծիսական համատեքստը:

Ատենախոսության չորրորդ գլխում, որ վերնագրված է «Տարածության կազմակերպումը«, մանրամասն քննարկվում են կոթողների դիրքը, հնարավոր ուղղվածությունը, միջավայրը, դրանց սահմանային կամ դոմինանտ բնույթը, բարձրլեռնային և նախալեռնային տեղադրությունը: Երբեմն քննությունն ավելի էսսեի բնույթ է կրում և դիտողություններն ավելի ենթադրությունների բնույթ ունեն: Այստեղ խիստ ուշագրավ են լանդշաֆտի ընտրության (լեռ, մարգագետին, աղբյուր) և կրկնվող լանդշաֆտների թեզերը (էջ 200 և հջրդ), որոնք, կարծում ենք, ենթակա են հետագա ավելի փաստարկված քննարկման: Մի տեսակ գաղափարների մեծ շտեմարան, որոնք կարծեք թե ավելի մտորումների տեղիք են տալիս, քան ընդունելի հավաստումներ են: Ուշագրավ է նաև Արագածի ավելի վաղեմիության և Գեղամա լեռների «ծաղկման» շրջանի մասին դիտողությունները, Այրարատը որպես այս ֆենոմենալ մշակույթի բնօրրան լինելու մասին թեզը (էջ 213):

Աշխատանքի ներածության մեջ և շարադրանքի ընթացքում հեղինակը ընդգծում է, որ հետազոտության հիմնական խնդիրներից մեկն էլ վիշապ կոթողների հնագիտական համատքեստը մշակելն է: Թեև նրա առանձին բաղադրիչները քննարկվում են աշխատանքի տարբեր հատվածներում, բայց առաձնին և վերջին նույնանուն գլուխը լրացուցիչ շեշտում է այս աշխատանքում հենց նման քննության կարևորությունը: Չթվարկելով մանրմասները, նշենք, որ ինչքան որ հասկանում ենք, խնդիրը հանգում է նրան, թե արդյո՞ք կոթողներին ի մոտո, կից, տակ կան մշակութային այլ հետքեր, որոնք անմիջական կապ ունեն դրանց հետ և կարող են օգնել դրանց կերպարի ու գործառույթի էլ ավելի հստակեցմանը: Շատ տիպական է հեղինակի այն դիտողությունը, որ վաղ հետազոտությունները այդ կոթողները դիտարկել են որպես ինքնուրույն, առանձին, որևէ այլ կապակցության մեջ չգտնվող մշակութային ֆենոմեն, երբ ներկա հետազոտութունն, ընդհակառակը, փորձում է տեսնել, վավերացնել և հավաստել նման կապերի առկայությունը: Եվ ընդհանուր առմամբ հնագիտական համատեքստի տակ տվյալ դեպքում պիտի հասկանալ հենց այդ կապակցությունների վավերացումն ու վերհանումն ի դեմս զանազան կառույցների, ճանապարհների, արտե և էկոֆակտերի:

Վերջում անդրադառնալով հեղինակի եզրակացությունններին, կարևոր ենք համարում ժամանակագրության հստակեցումը, կլիմայի փոփոխության հետևանքնով լեռնային ջրառատ տարածքների ինտենսիվ օգտագործումը: Փոքր ինչ թեական են թվում երկրագործական տնտեսության հետ կապերի ցուցումը:

Եզրակացնենք: Սա մեծ աշխատանք է, մանրամասն և լուրջ աշխատանք է, որ կատարվել է ոչ միայն աղբյուրների ու առկա քննությունների գերազանց իմացությամբ, այլ նաև և հատկապես ժամանակակից հնագիտական-երկրաբանական-միջավայրային և լաբորատոր մեթոդների հնարավոր բազմազանության ներառմամբ:

Ինձ համար, որպես ավելի ուշ կոթողային մշակույթով զբաղվողի, հաճելի և օգտաշատ ընթերցում էր: Կարծում եմ հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ. գ. դ., պրոֆեսոր

Համլետ Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոս, պ. գ. դ., պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն

Տորք Դալալյան

10 դեկտեմբերի 2024 թ.: